



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

## ՀՐԱՄԱՆ

157-Ա/2

24.06.2019թ

No \_\_\_\_\_

\_\_\_\_\_

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0413.06.5 - «ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ՝ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԽՈՐԱՑՎԱԾ ԻՄԱՑՈՒԹՅԱՄԲ»  
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0413.06.01.5- «ՄԵՆԵՋԵՐ՝ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴՈՒԱԼ  
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թ. մարտի 22-ի N 333-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 19-րդ կետը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1320-Ա/Ք հրամանը և ՀՀ ԿԳ նախարարության «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն» հիմնարկի կողմից ներկայացված փորձագիտական դրական եզրակացությունը՝

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

- Հաստատել միջին մասնագիտական կրթության 0413.06.5 - «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության 0413.06.01.5 «Մենեջեր՝ զբոսաշրջության ծառայությունների սպասարկման» որակավորմամբ փորձարարական դուալ ուսուցման համակարգի ուսումնական պլանը և մոդուլային ուսուցման ծրագրերը՝ համաձայն հավելվածի:
- ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական

հաստատություններում 2018/2019 ուսումնական տարվանից փորձարարական դուալ ուսուցման համակարգի ներդրման մասին» թիվ 1401-Ա/2 հրամանի հավելված 1-ով հաստատված «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն Գագիկ Գևորգյանին՝ միջին մասնագիտական կրթության 0413.06.5- «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության 0413.06.01.5 - «Մենեջեր՝ զբոսաշրջության ծառայությունների սպասարկման» որակավորման դուալ ուսուցումը կազմակերպել սույն հրամանի հավելվածով հաստատված ուսումնական պլանին և մոդուլային ծրագրերին համապատասխան:

3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Գրիշա Թամրազյանին:

**ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

24.06.2019

X 

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378